DOCUMENT 2

ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՄԻ ԴՊՐՈՑ

Հաջորդ առավոտյան երիտասարդ վհուկները հերթով դասարան մտան, ուր պետք է հանձնեին մոգական հեղուկների քննությունը: Ինչպես միշտ նման դեպքերում անհանգիստ մթնոլորտ է տիրում, յուրաքանչյուրն իրեն հարցնում է, արդյո՞ք լավ է կրկնել ծրագրի բանաձևերը: Հարևանուհիս՝ վհուկներից ամենատարեցը, միակն է, որը չի կասկածում. նա միշտ ամեն ինչ գիտի և նմանատիպ փորձությունը մի պարզ ձևականություն է համարում: Նա ձեռք է բարձրացնում.

- Ներողություն Տիկին, մեր գրառումների իրավունքն ունե՞նք:
- Դե օրիորդներ, գրավեք ձեր տեղերը: Շտապե՛նք,– կարգադրեց ուսուցչուհին: Ամեն մեկիդ մի կաթսա, և ոչ մի շատախոսություն: Ահա քննության թեման. Դուք պետք է պատրաստեք զվարթության հեղուկը առանց ձեր դասագրքերին նայելու: Դու՛ք, այդտեղ անմիջապես փակեք ձեր գրքերը: Լռությամբ անցեք աշխատանքի, երբ կավարտեք, կհամտեսեք ձեր հեղուկը, որպեսզի ստուգեք նրա արդյունավետությունը: Դե, սկսե՛ք:

Ըստ Ժիլ Մըրֆիի և Ամանդին Մալաբուլի, Չախողակ վհուկը

Պատասխանիր հետևյալ հարցերին՝ շրջանագծելով ճիշտ պատասխանը

① Ո՞վ է այս տեքստի հեղինակը:

Ամանդին Մալաբուլ *Ժիլ Մըրֆի* *Ուսուցիչը*

② Ինչու՞ է այս դասարանը յուրահատուկ:

Աշակերտները երիտասարդ են:
Ուսուցչուհին շատ խիստ է:
Աշակերտները բոլորն էլ վհուկներ են:

③ Արդյոք աշակերտները քննության ընթացքում միմյանց օգնելու իրավունքն ունեն:

Այո *Ոչ* *Մի քիչ*

④ Ինչպես է ուսուցչուհին ստուգում աշակերտի քննության հաջողությունը:

Աշակերտը պայթում է ծիծաղից:
Աշակերտը լուռ է:
Աշակերտն սկսում է շատախոսել:

… /2 + … ./2 + … /2 + … /2 + = … /8